«Շիրակի ուսուցիչների միություն» գիտական կենտրոն ՀԿ վերապատրաստող կազմակերպություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Գեղանկարչության առանձնահատկությունները

Կատարող՝ Աիդա Հարոյան

Դպրոց՝ Ակադեմիական վարժարան

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

Գյումրի 2023թ.

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1 Գեղանկարչության էությունը և նշանակությունը.....5

Գլուխ 2 Գեղանկարչության ուսումնասիրության առանձնահատկությունները դասապրոցեսի ընթացքում 11

Եզրակացություն.....14

Օգտագործված գրականության ցանկը 15

Ներածություն

«Գեղանկարչության յուրաքանչյուր աշխատանք պետք է արտահայտի կյանքի ինչ-որ մեծ կանոն, պետք է ուսուցանի, այլապես համր կլինի:»

Դ. Դիդերոտ

Գեղանկարչությունը օգտվում է գույնի, գծանկարի, կոմպոզիցիայի, ռիթմի, լույսի և ստվերի ընձեռած հնարավորություններից, որոնք նպաստում են հարթության վրա վերակենդանացնել իրականությունը, ստեղծել ծավալի ու տարածության պատրանք, հոգեբանական կերպարներ, կենդանի ու անշունչ առարկաներ՝ ստատիկ ու շարժուն վիճակներում: Գեղանկարչության բազմաթիվ ստեղծագործություններ ունեն փաստա-ինֆորմացիոն արժեք:

Գեղանկարչության հիմնական արտահայտչամիջոցը գույնն է: Կազմակերպված և իմաստավորված գույնը՝ կոլորիտը, ոչ միայն տալիս է ռեալ իրականության գունապատկերը, այլև օժտված է զգայական ներգործության մեծ ուժով: Յուրաքանչյուր պատկերում կոլորիտն ունի իր գունաշարը :

Աշխատանքի արդիականությունը կայանում է նրանում, որ գեղանկարչությունը նպաստում է աշակերտների գեղագիտական ճաշակի զարգացմանը, զարգացնելու ստեղծագործական մտածողությունը, նպաստում է զարգացնել ընդհանուր աշխարհայացը: Գեղանկարչության ուսումնասիրությունը նաև կարևոր նշանակություն ունի աշակերտների ինքնաճանաչման ինքնաարտահայտման գործընթացում:

Գեղանկարչությունն ուսուցանելիս աշակերտները բացահայտում են նոր գիտելիքներ և կարողանում են կիրառել առօրյա կյանքում: Աշակերտները սկսում են ստեղծագործ մոտեցում ցույց տալ, որն իր հերթին կարող է արդյունավետ լինել այլ առարկաներ սովորելիս:

Աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել գեղանկարչության առանձնահատկությունները և հասկանալ գեղանկարչության կարևորությունը կերպարվեստի դասերին:

Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել է հետևյալ *խնդիրը՝* ինչ կարևոր նշանակություն ունի գեղանկարչության ուսումնասիրությունը կերպարվեստի դասերին:

Աշխատանքն իրականացվել է ընդհանուր վերլուծության *մեթոդով*:

Աշխատանքը *կազմված* է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականությունից:

Գլուխ 1 Գեղանկարչության էությունը և նշանակությունը

Գեղանկարչությունը (երփնագիր), կերպարվեստի տեսակներից մեկն է։ Գեղանկարչությունը մարդկային աշխատանքի զարգացած ձևերից մեկն է և առարկայական, գեղագիտական արժեքների ստեղծման ոլորտ։ Ինչպես և արվեստի մյուս տեսակները, գեղանկարչությունը ճանաչողական և գաղափարական խնդիրներ է իրագործում, ստեղծում մարդու, բնության, առարկաների, պատմական և հասարակական երևույթների գեղարվեստական պատկերներ։ Գեղանկարչության բազմաթիվ ստեղծագործություններ ունեն փաստա-ինֆորմացիոն արժեք[1]։

Գեղանկարչությունը ձևավորում է մարդու գեղագիտական ճաշակը, ունի ճանաչողական նշանակություն, ստեղծում է մարդու, բնության, առարկաների, պատմական և այլ երևույթների գեղարվեստական պատկերներ՝ օգտագործելով գույնի, գծանկարի, կոմպոզիցիայի, լույսի և ստվերի ընձեռած հնարավորությունները։ Տարբերում են գեղանկարչության պատմական, կենցաղային, անիմալիստական (կենդանիների պատկերումը) և այլ ժանրեր։ Նշանակությամբ, կատարման բնույթով ու կերպարներով առանձնանում են մոնումենտալ-դեկորատիվ գեղանկարչությունը (որմնանկարչություն, առաստաղապատկեր, պաննո), հաստոցային նկար, մանրանկարչություն, բեմանկարչություն և այլն։ Գեղանկարչության տարբերակներից են տրամապատկերը և համայնապատկերը։ Ներկանյութը կապակցող նյութերի բնույթով, հարթության վրա նրա ամրանալու տեխնոլոգիայով տարբերվում են՝ յուղաներկ գեղանկարչություն, ջրում լուծվող ներկերով գեղանկարչություն՝ թաց (ֆրեսկո) և չոր (ասեկկո) հիմնածեփի վրա, տեմպերա, սոսնձաներկով գեղանկարչություն, մոմանկարչություն, արծն, սիլիկատային խեցեգործական ներկերով գեղանկարչություն և այլն։ Անմիջականորեն գեղանկարչությանն են հարում խճանկարը և վիտրաժը։ Գեղանկարչական գործեր ստեղծելիս կիրառվում են նաև ջրաներկը, գուաշը, պաստելը, տուշը։

Գեղանկարչության հիմնական արտահայտչամիջոցը գույնն է։ Կազմակերպված և իմաստավորված գույնը՝ կոլորիտը, ոչ միայն տալիս է ռեալ

[1] https://hy.wikipedia.org/wiki/%D4%B3%D5%A5%D5%B2%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80%D5%B9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6 20.03.23

իրականության գունապատկերը, այլև օժտված է զգայական ներգործության մեծ ուժով: Յուրաքանչյուր պատկերում կոլորիտն ունի իր գունաշարը (գամմա): Գոյություն ունի նաև մեկ գույնի երանգներով գեղանկարչություն (միագույն գեղանկարչություն): Գունային կոմպոզիցիան ապահովում է ստեղծագործության գունային որոշակի ամբողջականությունը: Գեղանկարչության մյուս արտահայտչամիջոցը՝ գծանկարը (գիծ և լուսաստվեր), ռիթմով և կոմպոզիցիայով գույնի հետ կազմակերպում են պատկերը: Պայմանականորեն տարբերվում են գեղանկարչական պատկերման երկու տիպ՝ գծա-հարթապատկերային և ծավալա-տարածական, սակայն նրանց մեջ հստակ սահման գոյություն չունի: Գծա-հարթապատկերային գեղանկարչությանը բնորոշ են լոկալ գույնի ընդգծված եզրագծերով հարթ գունահատվածները, հստակ և ռիթմիկ գծերը: Տոնային գեղանկարչության հնարավորությունները հարուստ են, այն բարդ ու դինամիկ մշակման միջոցով ցուցադրում է գույնի նրբագույն փոփոխությունները, ինչպես նաև այդ գույնի տոնը՝ կախված լուսավորությունից, իրար հարևանող գույների փոխհարաբերությունից (ռեֆլեքսներ):

Գեղանկարչության ստեղծագործությունը բաղկացած է հիմքից (կտավ, փայտ, թուղթ, ստվարաթուղթ, քար, ապակի, մետաղ և այլն), որը սովորաբար ծածկվում է հիմնաշերտով: Գեղանկարչության արտահայտչական հնարավորությունները, կատարման տեխնիկայի յուրահատկությունները նաև կախված են ներկերի հատկություններից, կապակցանյութի բնույթից, վրձիններից, լուծիչներից: Անհրաժեշտ գույնը, նրբերանգը ստանալու համար ներկերը միմյանց խառնում կամ գունաթափանցում են (լեսել): Հաստոցային նկարի կամ որմնանկարի ստեղծման պրոցեսը բաղկացած է մի քանի փուլերից (գծանկար, նախաթույր, լեսում):

Գեղանկարչությունն սկզբնավորվել է դեռևս քարի դարում[2]: Պահպանվել են ժայռապատկերներ Ֆրանսիայում (Ֆոն դը Գոմ քարայրեր), Հյուսիսային Իսպանիայում (Ալտամիր) և այլուր: Արևելքի հնագույն երկրներում (հատկապես՝ Հին Եգիպտոսում) և Ամերիկայում գոյություն է ունեցել մոնումենտալ գեղանկարչություն, Հին Հունաստանում՝ ֆրեսկոների (որմնանկարչության տեսակ է՝ թաց սվաղի վրա) և խճանկարների կողքին տեղ է գտել նաև հաստոցային նկարչությունը (հիմնականում

[2]https://shamirampoghosian.wordpress.com/2014/03/05/%D5%A3%D5%A5%D5%B2%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80%D5%B9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/ 20.09.23

մոմանկարչության տեխնիկայով): Հայտնի են անտիկ շրջանի ֆայյումյան դիմանկարները (հին եգիպտական դիմանկարներ, հայտնաբերվել են Էլ Ֆայյում օազիսում, 1887 թ-ին):

Գեղանկարչությունը մեծ վերելք է ապրել Վերածննդի շրջանում: Այդ արվեստի նախակարապետներից էր XIV դարի իտալացի նկարիչ Բոնդոնե դի Ջոտտոն: Վերածննդի խոշորագույն գեղանկարիչներից են Մազաչչոն, Անդրեա Մանտենյան, Սանդրո Բոտտիչելլին, Միքելանջելոն, Լեոնարդո դա Վինչին, Ռաֆայելը, Տիցիանը, Ջորջոնեն (Իտալիա), Յան վան Էյքը, Պիտեր Բրեյգելը (Նիդեռլանդներ), Ալբրեխտ Դյուրերը, Մատիս Նիտհարդը (Գերմանիա) և ուրիշներ: XVII դարում ընդլայնվել և ավելի հստակ ձևավորվել է ժանրերի համակարգը, ծաղկել է մոնումենտալ-դեկորատիվ արվեստը (հատկապես՝ բարոկկո ոճում):

XVII–XVIII դարերում եվրոպական գեղանկարչության զարգացման ընթացքը պայմանավորված էր Ֆրանսիայում (Ժորժ Լատուր, Ժան Բատիստ Սիմեոն Շարդեն, Ժակ Լուի Դավիդ), Իտալիայում (Կարավաջո, Ջուզեպպե Կրեսպի), Իսպանիայում (Էլ Գրեկո, Դիեգո Վելասկեզ, Ֆրանսիսկո Գոյա), Ֆլանդրիայում (Պիտեր Պաուել Ռուբենս, Յակոբ Յորդանս), Ռուսաստանում (Դմիտրի Լևիցկի), Հոլանդիայում (Ռեմբրանդ, Ֆրանս Հալս) և այլ երկրներում ազգային դպրոցների ձևավորմամբ: XIX դարում Եվրոպայում և Ամերիկայում առաջացել են նոր ազգային դպրոցներ, ուժեղացել են տարբեր երկրների գեղանկարչության փոխազդեցությունները: XX դարի խոշոր գեղանկարիչներ Պաբլո Պիկասսոն, Անրի Մատիսը (Ֆրանսիա), Դիեգո Ռիվերան, Դավիդ Սիկեյրոսը (Մեքսիկա), Ռենատո Գուտուզոն (Իտալիա), Վալենտին Սերովը, Մարկ Շագալը (Ռուսաստան) և ուրիշներ իրականությունը նորովի են պատկերել իրենց գեղանկարներում:

XX դարի կեսից առաջացել են նոր հոսանքներ ու դպրոցներ, որոնց բնորոշ են իրականության և աշխարհի նյութականության սուր զգացողությունը, կերպարների հոգևոր հարստությունն ու ռոմանտիկ ոգեշնչվածությունը:

Գեղանկարչությունը Հայաստանում նույնպես սկզբնավորվել է վաղ անցյալում. հայտնաբերվել են մ. թ. ա. VI–IV հազարամյակների ժայռապատկերներ, նեոլիթյան, էնեոլիթյան շրջանի գունավոր, նախշազարդ և բրոնզի դարի երկրաչափական, բուսական, կենդանական զարդամոտիվներով խեցեղեն: Ուրարտական շրջանում

գեղանկարչությունն արդեն մասնագիտացված բնագավառ էր (որմնանկարներ, խճանկարներ): XVII–XVIII դարերի մոնումենտալ և հաստոցային գեղանկարչությունը զարգացել է Հովնաթանյան տոհմի նկարիչների, Նոր Ջուղայի դպրոցի (Մինաս, Հովհաննես Մրքուզ) գործունեության շնորհիվ: Նոր ժամանակաշրջանի հայկական գեղանկարչության նշանավոր ներկայացուցիչներ Հակոբ Հովնաթանյանի և Հովհաննես Այվազովսկու մի շարք գործեր գույնի անսովոր դրսևորման շնորհիվ դարձել են այդ շրջանի արվեստի լավագույն նմուշներից: XX դարի սկզբին Հայաստանում և արտերկրում ստեղծագործող մի խումբ նկարիչներ՝ Վարդգես Սուրենյանցը, Գևորգ Բաշինջաղյանը, Փանոս Թերլեմեզյանը, Ստեփան Աղաջանյանը, Եղիշե Թադևոսյանը, Վարդան Մախոխյանը, Էդգար Շահինը և ուրիշներ, գեղանկարչությունը հարստացրել են բարձրարժեք գործերով: XX դարի 1-ին կեսին հայկական կերպարվեստի ազգային ավանդույթների և գեղանկարչության զարգացմանն իր բացառիկ արվեստով նպաստել է Մարտիրոս Սարյանը: Այդ շրջանում գեղանկարչության առաջընթացին իրենց լուրջ նպաստն են բերել նաև Սեդրակ Առաքելյանը, Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանը, Սեդրակ Ռաշմաճյանը, Վահրամ Գայֆեճյանը և ուրիշներ:Հայկական գեղանկարչությունն առանձնակի վերելք է ապրել 1960-ական թթ-ին՝ Հարություն Կալենցի, Մինաս Ավետիսյանի, Գրիգոր Խանջյանի, Մարիամ և Երանուհի Ասլամազյանների, Հովսեփ Փուշմանի, Գառզուի, Շարթի, Ժանսեմի և ուրիշների ստեղծագործություններով: Արդի հայ գեղանկարչության ճանաչված դեմքերից են Մկրտիչ Սեդրակյանը, Ռոբերտ և Հենրի Էլիբեկյանները, Կարեն Սմբատյանը, Ռուդոլֆ Խաչատրյանը, Ալեքսանդր Գրիգորյանը, Զուլում Գրիգորյանը, Արկադի Բաղդասարյանը, Էմիլ Գազազը, Ռուբեն Ադալյանը, Վալմարը, Փարավոն Միրզոյանը, Սարգիս Համալբաշյանը, Ռուբեն Աբովյանը, Արկադի Պետրոսյանը և ուրիշներ:

Գեղանկարչական ոճերն ու միտումները ձևավորվել են գաղափարախոսության, հասարակության, կրոնի, ավանդույթների քաղաքական և տնտեսական զարգացման ազդեցության ներքո: Ոճերի զարգացման պատմությունը ցույց է տալիս հասարակության բարդ մշակութային էվոլյուցիան:

Նշենք գեղանկարչության ժանրերը՝

Ժանրերից մեծ մասի անվանումը արդեն մեզ հուշում է թե ինչ է պատկերված նկարներում: Անդրադառնանք հիմնական տեսակներին:

Դիմանկարը մարդու կամ մարդկանց խմբի պատկեր է, որ գոյություն ունեն կամ գոյություն են ունեցել իրականում: Դիմանկարի ժանրի սահմանները հստակ չեն, և հաճախ դիմանկարը կարող է համատեղվել այլ ժանրերի տարրերի հետ[3]:



[3] https://hy.wikipedia.org/wiki/%D4%B4%D5%AB%D5%B4%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80 20.09.23

Բնանկարի պատկերման առարկան նախաստեղծ կամ մարդու կողմից որոշակիորեն փոփոխված բնությունն է: Գոյություն է ունեցել հին դարերում, միջնադարում կորցրել է իր նշանակությունը և կրկին տարածում է գտել Վերածննդի դարաշրջանում՝ աստիճանաբար դառնալով գեղանկարչության հիմնական ժանրերից մեկը[4]:



Ծովանկարում պատկերվում է ծովային տեսարան, ծովամարտ կամ ծովում տեղի ունեցող այլ իրադարձություն: Ծովանկարչությունը բնանկարչության մի տեսակն է, որ առանձնացել է XVII դարի սկզբին Հոլանդիայում:

Պատմական գեղանկարչությունն ընդգրկում է ոչ միայն իրականում տեղի ունեցած պատմական դեպքերի, այլև առասպելական ու աստվածաշնչյան թեմաներով նկարները, որոնք վերաբերում են առանձին ժողովրդի կամ մարդկության պատմությանը: Մարտանկարչության պատկերման հիմնական առարկան ցամաքային ու ծովային մարտերն են, ինչպես նաև ռազմական արշավանքները:

Նատյուրմորտը անկենդան առարկաների պատկերումն է[5]:

[4] https://hy.wikipedia.org/wiki/%D4%B2%D5%B6%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80 21.09.23
[5] https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%A1%D5%BF%D5%B5%D5%B8%D6%82%D6%80%D5%B4%D5%B8%D6%80%D5%BF 21.09.23

Գլուխ 2 Գեղանկարչության ուսումնասիրության առանձնահատկությունները դասապրոցեսի ընթացքում

Գեղանկարչության ուսումնասիրությունը դասապրոցեսի ընթացքում ունի կարևոր նշանակություն: Այն նպաստում է աշակերտների գեղագիտական ճաշակի զարգացմանը, զարգացնելու ստեղծագործական մտածողությունը, նպաստում է զարգացնել ընդհանուր աշխարհայացը:

Տեսական նյութը աշակերտներին հաղորդելիս նշեմ իմ կողմից կիրառվող մի քանի մեթոդներ: Դասը սկսելու տարբերակներից կիրառում եմ ԳՈՒՍ մեթոդը[6]: Դասասկզբում գծում եմ Մ-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում եմ՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո դիմում եմ աշակերտներին ի՞նչ գիտեք այս թեմայի, հասկացության մասին: Ապա լրացնում եմ գիտեմ սյունակը: Հաջորդիվ աշակերտներին հարցնում եմ՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին: Եվ լրացնում եմ ուզում եմ իմանալ սյունակը: Դասի վերջում լրացնում եմ սովորեցի սյունակը:



[6] Ս. Խաչատրյան, Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020թ

Հաջորդ իմ կողմից կիրառվող մեթոդը՝ շրջված դասարան մեթոդն է: Աշակերտն այսպիսով հետևում է դասին՝ իր համար ցանկալի տեմպով: Նա կարող է դիտել տեսանյութը այնքան անգամ, որքան ցանկանում է[7]: Աշակերտները կարող են դանդաղեցնել կամ արագացնել իրենց ուսուցման տեմպը՝ ըստ իրենց սեփական կարիքների: Ուսուցիչն ավելի շատ ժամանակ կարող է տրամադրել անհատապես կամ աշակերտների փոքր խմբերի հետ աշխատելու համար՝ նրանց առաջարկելով իրենց կարիքներին համապատասխան առաջադրանքներ: Այս մեթոդի դեպքում աշխատանքը հիմնված է աշակերտի վրա՝ով դառնում է իր ուսուցման դերակատարը և մասնակցում է դասընթացի համաստեղծմանը:

Նաև կարևոր նշանակություն ունեն կազմակերպվող գործնական դասերը, որոնց ընթացքում աշակերտները կարողանում են արտահայտել իրենց հույզերն ու ապրումները:

Երբեմն հանձնարարում եմ աշակերտներին բնօրինակից պատկերում, որը նպաստում է աշակերտների մտահորիզոնի ընդլայնման, տեղի է ունենում անձնական վերաբերմունքի, գեղագիտական ճաշակի, երևակայության և հիշողության ձևավորում:

Գեղանկարչության ուսումնասիրությունը օգնում է ձևավորել աշակերտների մոտ՝

- տրամաբանական, ստեղծագործական և քննադատական մտածողության պարզ հմտություններ,
- իր առջև դրված խնդիրը մշակելու և այն լուծելու համար քայլեր կատարելու կարողություն,
- շրջակա աշխարհի օբյեկտների, առարկաների փոխադարձ կապերի մասին գիտելիքներ,
- սեփական մտքերը, զգացմունքները, կարիքները և ցանկություններն արտահայտելու կարողություն,
- նոր գիտելիքներ Հայաստանի պատմության, աշխարհագրության, մշակույթի, ազգային արժեքների մասին,

[7] Clive Thompson (15 Jul 2011), "How Khan Academy is Changing the Rules of Education", Wired

- այլ ազգերի, ավանդույթների, արժեքների նկատմամբ հետաքրքրության ձևավորում,
- գեղարվեստական գործունեությամբ զբաղվելու հմտություններ:

Եզրակացություն

Այսպիսով՝ հետազոտական աշխատանքի ուսումնասիրության արդյունքում կարող ենք ասել, որ գեղանկարչության ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի աշակերտների մտահորիզոնի, ստեղծագործական կարողությունների զարգացման գործում:

Աշակերտները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: Երեխաները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նրանք ի վիճակի են զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ:

Գեղանկարչության ուսումնասիրությունը նպաստում է մշակութային, ինքնաճանաչողական, սոցիալական, ժողովրդավարական, քաղաքացիական, սովորել սովորելու կարողունակությունների զարգացմանն:

Օգտագործված գրականության ցանկը

- Ս. Խաչատրյան, Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020թ
- Clive Thompson (15 Jul 2011), "How Khan Academy is Changing the Rules of Education", Wired
- https://shamirampoghosian.wordpress.com/2014/03/05/%D5%A3%D5%A5%D5%B2%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80%D5%B9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/ 20.09.23
- https://hy.wikipedia.org/wiki/%D4%B3%D5%A5%D5%B2%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80%D5%B9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6 20.03.23
- https://hy.wikipedia.org/wiki/%D4%B4%D5%AB%D5%B4%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80 20.09.23
- https://hy.wikipedia.org/wiki/%D4%B2%D5%B6%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80 21.09.23
- https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%A1%D5%BF%D5%B5%D5%B8%D6%82%D6%80%D5%B4%D5%B8%D6%80%D5%BF 21.09.23